

ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Պալըքէսէրու Հայոց Վիճակին Առաջ-
նորդ Բարեշնորհ Տիմօթէոս Վարդա-
պետ Սափրիչեան ի 25ն Յունիս ամսոյ՝
Վեհ. Հայրապետէն յիշեալ Վիճակին
վերայ Եպիսկոպոս ձեռնադրեցաւ ըստ
խնդրանաց մերազնեայ Ժողովրդեանն
եւ ըստ վկայութեան Գեր. Տ. Ներսէս
Արքեպիսկոպոս Սրբազան Պատրիարքի
Հայոց Կ. Պօլսոյ:

Յիշեալ Բարեշնորհ Վարդապետի Ե-
պիսկոպոսական վսեմ աստիճանը շնոր-
հաւորելով, կրարեմաղթեմք յԱստուծոյ
տալ նմին նոր ոգի՝ կարողութիւն եւ
զօրութիւն խորտէ Զանալոյ եւ աշխա-
տելոյ համար ի պայծառութիւն եկե-
ղեցեաց եւ դպրոցաց իւրոյ Վիճակին.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Յունիս ամսոյ վերջերում Գեր. Յա-
րութիւն Եպիսկոպոս Յովհաննիսեան ի
Կ. Պօլիս եւ Յուլիս ամսոյ սկիզբներում
Գեր. Տիմօթէոս Եպիսկոպոս Սափրիչ-
եան ի Պալըքէսէր վերադառնալոյ հա-
մար ի Ս. Էջմիածնէ մեկնեցան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Ս. ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այ-
վաղեանց՝ քանի տարիէ հետէ Մայր
Աթոռոյս Ս. Գէորգեան ձեմարանի Վե-

րտեսչութեան հետ Վրաստանի եւ
Իմէրէթի Վիճակին Հայոց Թեմակալ
Առաջնորդութիւնը ստանձնած կվա-
րէր, իսկ յիշեալ նշանաւոր եւ կարե-
ւոր երկու պաշտօնները իմիասին ըստ
արժանւոյն յաջողութեամբ կատարելը
եթէ չասեմք անկարելի՝ պէտք է խոս-
տովանիլ զի շատ դժուար է՝ ինչպէս
որ փորձով պարզուեցաւ, վասն որոյ
Վեհ. Հայրապետ Ազգիս անհրաժեշտ
համարեցաւ զՆորին Գերապատուու-
թիւն ազատ կացուցանել ձեմարանի
վերատեսչութեան պաշտօնէն՝ եւ զԳեր.
Անդրէաս Ս. Արքեպիսկոպոս ձեմարանի
առժամանակեայ Ընդհանուր Կառա-
վարիչ կարգել, որ եւ Յուլիս ամսոյ
15էն սկսեալ ստանձնեց իւր նոր պաշ-
տօնը, ուստի կշնորհաւորեմք բարե-
մաղթելով Նորին Գերապատուութեան
կարողութիւն եւ յաջողութիւն:

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԻՒՐԱԿԱՆ.

Վեհ. եւ Սրբազնագոյն Հայրապետ
Ազգիս անձնական երկարատեւ տկա-
րութենէն ստիպեալ ի 17ն Յուլիս ամ-
սոյ օգափոխութեան համար Բիւրաղա-
նու ամարանոցը դնաց: